



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

51
p. 1038

150

2002

ՄԻՄՈՆ ԶԻՍՄԼԻԿԱՆ

ՄԻՄՈՆ ԶԻՍՄԼԻԿԱՆ


ԱՌԱՋՆՈՐԳ
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ


ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն: — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ պանրայի հաշիւներ եւ այլն.



Հասնր Ա. — Տեսր ժԱ.



Կ. ՊՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1901

Չուխայի վանառականութիւնը

Չուխայի Պոլիս ներածումը, որ ատենօք այնքան կարեւոր էր, այսօր զգալապէս նուազած է թէ՛ քանակի թէ՛ արժէքի կողմէ: Ասոր պատճառներն են. — 1. Պատրաստ զգեստները, որոնցմով մեր հրապարակը կ'ազդէն վիեննայի մեծ գործարանները, որք հսկայ վաճառատուններ ունին Պոլսոյ մէջ եւ մեծ քանակութեամբ կ'սպառեն ամէն տեսակ ֆուդիւմներ, բարսբիւներ ու բալդօներ, վայելուչ, նորածեւ ու ածան: — 4. Պոլսոյ Օսմանեան Առեւտրական Սենեկի պաշտօնաթերթը, ասկէ քանի մը տարի առաջ, ուշադրաւ յօդուած մը նուիրելով պատրաստ զգեստեղէններու, մաքսատուրքի յաւելում կը պահանջէր, քանի որ անոնք համեմատապէս նուազ կը վճարեն, այսինքն արժէքին վրայ 8% ինչ որ արդէն կը վճարեն ծրարով եկած չուխաները (*):

[*] Մենք համամիտ չենք այս դիտողութեան, զի, օրինակի համար, 50 ֆրանք արժող պատրաստ զգեստի մը համար 25 ֆրանքի կերպաս միայն գացած է, եւ մնացեալը ձեռական աշխատութեան վարձքն է, որ մարսային տուրքի կ'ենթարկուի մասամբ: Թուրքիոյ արհեստաւորք վախնալու բան չունին օտար գործաւորներու մըցումէն, որ հոս կը հասնի մարսատուրքի եւ փոխադրութեան ծախսերու ենթարկուած: Պոլիս այնպիսի քաղաք մ'է, ուր աւելի շատ են առեւտրական ու վարչական պաշտօնեաներ, արհեստաւորներ եւ ուրիշ անմեր ստանդարտական պիւտժէն կը պարտուորէ գիրենք ածան զգեստ ծախողներուն դիմել: Հա՞րկ է միթէ աւելցնել ժողովրդեան այս մեծ մասին ծախսերը, քանի մը հարիւր դերձակներու կամ վաճառականներու գործ հանելու միակ նպատակով: Եթէ սպառողներուն զրպանէն զրամ հանուի, ու աշխատաւորներու մասնաւոր դասակարգի մը ափը լեցուի, առեւտրական միւս ամէն դասակարգերն ալ իրաւունք պիտի չունենան նոյնը պահանջելու: Օտար ճարտարաւորութեան արտադրութիւնը

— 2. Տեղային ճարտարարուեստի զարգացման հետեւանքով, Գարամուսաւի մէջ երկու գործարաններ կան, մին պետական, միւսը մասնաւոր: Առաջինը տարեկան 200,000 քիւ ընտիր չուխա կը պատրաստէ Օսմանեան բանակին համար: Միւսն աւելի շայազ կը շինէ: — 3. Այն տեղեր որք առաջ Պոլսէ կը գնէին իրենց պէտք եղած ապրանքը, հիմա, հաղորդակցութեանց դիւրութեան շնորհիւ, ուղղակի իրենք բերել կուտան Եւրոպայէ: Քառորդ դար առաջ, կլորիկ հաշուով, 1 ու կէս միլիոն Օսմ. ոսկիի չուխա կը ներածուէր Պոլիս՝ Ֆրանսայէ, Անգլիայէ, Աւստրիայէ, բայց այդ միջոցին Վիեննայի պատրաստ զգեստներու մրցումը չի կար եւ տեղային ճարտարարուեստն ալ զարգացեալ վիճակ մը չունէր: Միջին դասակարգը լաւ ապրանք կը գնէր, դերձակները բաւական ստուար թիւ մը կը կազմէին եւ շահաւոր գործեր կ'ընէին: Քանի մը եւրոպական գործարաններ միայն ներկայացուցիչ ունէին հոս: Զուխային ընտիր եւ միջին տեսակը կուգար Բարիզէն, Լիօնէն, Մարսիլիայէն, Լոնտոնէն, Հդէրսֆիլտէն, և զուտ բուրդէ կամ լոկ թեզանը բուրդէ և առէջքը բամբակէ սովորական տեսակները՝ Պրատֆորտէ եւ Լիւտսէ: Աւստրիա գունաւոր տեսակները միայն կը զրկէր: Իգէո ու Մագամէթ ալ աժան ապրանքները կը ներածէին ի Թուրքիա, բայց իրենց գործառնութիւնն երկար չտեւեց եւ այս երկու քաղաքներ, ինչպէս Պէտառիէօ եւ Լիգիէօ, շատ ետ մնացին իրենց աւստրիացի եւ անգլիացի մրցակիցներէն ու վերջապէս տեղի տուին անոնց: Կը մտնենք նոր շրջանի մը մէջ, Ալլաս եւ Պելժիա ասպարէզ կուգան, սանտրուած ու զգուած բուրդէ իրենց ընտիր ապրանքներով: Գործարանատէրերն ուղղակի իրենք ներկայացուցիչ-

մարտատուրք, նաւորչէր եւ ուրիշ զանազան ծախքեր կը վճարեն, որոնցմէ ազատ է տեղային ճարտարարուեստը: Ասիկա բաւական չէ՞ որ մեր երկրին յարմար ճարտարարուեստներ ծին ծաղկին եւ ապրուստի նոր միջոցներ հայթայթեն, ինչպէս ըրա շերամաբուծութիւնը որ լիովին յաջողեցաւ շնորհիւ Կայսերական կառավարութեան քաջալերութեան:

ներ կը զրկեն Պոլիս: Մրցումը սաստիկ է: Ֆրանսացի եւ անգլիացի գործարանատէրերը կ'զգան ասիկա եւ առաջինները կ'սկսին իրենք ալ ներկայացուցիչներ զրկել մրցումին դիմադրելու համար, մինչ երկրորդները, աւելի ճարպիկ բռնելով, իրենց տեսակները կ'ստորնացնեն, զուտ բուրդէ ապրանքներուն տեղ բամբակախառն բուրդէ ապրանքներ զրկելով եւ աժան աժան ծախելով: Այն ատեն Էլպէօֆ Պոլիս կը զրկէ իր գեղեցիկ ու ընտիր ապրանքները բալլոյի համար, Սըտան՝ իր դիմացկուն ապրանքներն եւ Ռուպէ՝ իր Ֆասսօնները, որք շատ կը գնահատուին: Բայց ահա յանկարծ Աւստրիայէն պատրաստ զգեստի հարուստ վաճառականներ կուգան Պոլիս կը հաստատուին եւ կ'սկսին անօրինակ աժան գիներով զգեստ ծախել: Տեղացի դերձակներուն հաց չի մնար և բացի անոնցմէ որք խոշոր գրամագըլուի ունին եւ հարուստ յաճախորդներ, միւսներն իրարու ետեւէ կը քաշուին հրապարակէն: Ծարտարարուեստը հրաշալի յառաջդիմութիւն կ'ընէ Պելժերուն մէջ, որոց կը միանան գերման եւ աւստրիացի արհեստաւորք եւ Էլպէօֆի գեղեցիկ ապրանքներուն տեղ կ'անցնին Վէովիէի, Պոտնի, Էքս լա Շարէլի ապրանքները: Այսօր աժան տեսակ ապրանքներու վրայ միայն մեծաքանակ գործ կ'ըլլայ եւ կուգայ հետեւեալ երկիրներէն. —

Անգլիայ	200	հազար	Օսմ. ոսկիի
Աւստրիայ	127	»	»
Գերմանիայ	95	»	»
Պելժիայ	81	»	»
Ֆրանսայ	32	»	»
Իտալիայ	24	»	»
Պուլկարիայ	12	, 700	»
Հոլանտայ	3	500	»
	575,	200	Օսմ. ոսկի

Ասոնց 80 % ը զուտ բուրդէ ապրանքներ են եւ 20 % ը բամբակախառն բուրդէ: Պոլիս ներածուած չուխաները կուգան հետեւեալ երկիրներէն. — Ֆրանսա. — Էլպէօֆ եւ Թուրքուէն, բալլոյի յատուկ

ապրանքներ, պղտիկ քանակութեամբ, մէդրոն 6—16 ֆր :

Անգլիա . — Հրդեհաձիւս, բուրդէ ապրանքներ, եարտան 3—8 շիլին : Պրասթորս եւ Լիսս , բամբակախառն բուրդ, եարտան 1/2—3 շիլին : Մեյդօն 5—10 բէնա : Առմի փոյն, աճրոզ բուրդ, 1/2—1/11 1/2 :

Գերմանիա . — Գօրպիւս , սանտրուած բուրդէ, մէդրոն 4—9 մարք : Ֆօրսդ , մէդրոն 1,80 էն մինչեւ 3,50 մարք : Էֆս լա Շաբել, մէդրոն 5—7 ֆրանք : Կորլից , 5—10 ֆր : Պիլպիլրո (Ալզաս), մէդրոն 4—9 ֆրանք :

Պելժիա . — Վեռվիե եւ շրջակայքը , Հօսիմոն , Տիգօն , Էնսիվալ եւն : Մէդրոն 3էն 8 ֆրանք :

Աւստրիա . — Պուռն , զուտ բուրդէ , 4—7 ֆրանք : Պիլից , զուտ բուրդէ , գունաւոր , 1,42—3,30 ֆիօրին , 136 սնդմ . լայնութեան վրայ : Այս ապրանքը բռնուած է Պարսկաստանի , Անատօլուի եւ Կ . Պոլսոյ մէջ :

Իտալիա . — Պիեյա , գզուած բուրդով , 2,50էն 5 ֆր :

Հոլանտա . — Էնշովէն , Թանձր (խապա) բուրդէ , եարտան 1/6—2 շիլին : Դիլպուրկ , զուտ բուրդէ , եարտան 2—4/4 շիլին :

Պուլկարիա . — Ապա , 5 1/2—16 շրջ . արշընը :

ՎԱՃԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Առաջ Ֆրանսա եւ Անգլիա ամէնէն երկար պայմանաժամը կուտային , այսինքն հաշուեցոյցին թուականէն 120 օր , կանխիկի համար 3 0/0 զեղչով : Անգլիա ծրար գրուի կը զեղչէր 1 եարտա եւ կանխիկի համար 2 1/2 0/0 զեղչ կուտար : Պելժիոյ տուած պայմանաժամն 90 օր էր 9 0/0 զեղչով եւ կանխիկի համար 3 0/0 յաւելուածական զեղչով : Բայց Գերմանիա՝ մեր հրապարակին վրայ գործի սկսելուն պէս՝ 6 ամիս պայմանաժամ տուաւ եւ միւսներն ալ ստիպուեցան հետեւիլ անոր : Գերման գործարանատէրք մինչեւ 8 ամիսի հանեցին իրենց պայմանաժամը , կանխիկի համար 5 0/0 զեղչով : Անգլիա , որուն գործարանատէրքը շատ քիչ անգամ կը հաւանին ուղղակի գործ ընել , Թուրքիոյ հետ առուտուր

կ'ընէ Պրատֆորտի , Լիտսի եւ Հրդեհաձիւտի յանձնակատարներուն միջոցաւ : Օտար վաճառականներու հետ ուղղակի գործ չընելու մասին անգլիացի գործարանատէրքերու ընդունած այս դրուժիւնը պատճառ եղած է որ ֆրանսացի շատ վաճառականներ գնման գրասենեակներ հաստատած են Լիտսի եւ Պրատֆորտի մէջ . կլորիկ շահեր ընելով :

Աւստրիա 6 ամիս պայմանաժամ կուտար 10 0/0 զեղչով , կանխիկի համար 4 0/0 զեղչ : Իտալիա 6 ամիս պայմանաժամ կամ 5 0/0 զեղչ կանխիկի համար : Հոլանտա 6 ամիս պայմանաժամ կամ 4 0/0 զեղչ կանխիկի համար : Պելժիա 6 ամիս պայմանաժամ կամ 6 0/0 զեղչ կանխիկի համար :

Ապրանքները , ըստ պայմանի , կը ծախուին Ֆրանցօ Մարսիլիա , Ռուէն , Լիվրբուլ , Անվէրս , Ամսդէրտամ , Ռօդէրտամ , Դրիէսդէ , ձենովա կամ Պոլիս : Բայց ընդհանրապէս Ֆրանցօ Ֆապրիֆ կ'ըլլայ , եթէ վճարուին յապաղի , Անգլիա 5 0/0 տոկոս կը հաշուէ , մինչ միւսները 6 0/0 կը հաշուեն : Երարները ընդհանրապէս ծալուած են 45 սնդմ .ի վրայ , բայց քանի մը տեսակներ , գլխաւորապէս Ֆրիզները , կլոր ծալուած են (rouler) : Պելժիա երկար ստեն առաջնութիւն ունեցաւ 1 . իր գիներուն չափաւորութեան պատճառաւ , եւ 2 . այն առաւելութեամբ զոր կուտար իր յաճախորդներուն , 15—17 մէդրոնց կէս ծրարներ պատրաստելով տեսակի եւ գոյնի համեմատ , որով վաճառականք կրնան լաւ ասօրդիման (չեթիս) մը շտկել առնուազն մէկ երրորդ պակաս գումարով , քան որչափ պէտք պիտի ըլլար այդ տեսակը շինելու համար ի Ֆրանսա , որու գործարանատէրքը 22 մէդրէ պակաս ծրար չեն շիներ եւ շատերն ալ 40 — 45 մէդրոնց ծրարներ կը պատրաստեն , ամէն մէկ տեսակէն ու գոյնէն : Այսօր , բացի քանի մը մեծ գերձակներէ եւ 2—3 վաճառականներէ , որք տակաւին Էլպէօֆի եւ Սըտանի ապրանքներ բերել կուտան փոքր քանակութեամբ , Պոլսոյ մէջ սպառած միւս տեսակներն Անգլիայէ , Աւստրիայէ , Պելժիայէ եւն . կուգան : Ռուպէի Ֆասօնները միայն կարեւոր սպառում ունին Պոլսոյ մէջ :

Հ Ա Շ ՈՒ Ա Վ Ա Լ Ն Ե Ր ՈՒ Ն

Ա. և Բ. վաճառականները փոխգրից ընկերութիւն մը կազմած են 100,000 զրշ. դրամագլուխ գնելով, որուն 60 հազարը պիտի դնէ Ա. և 40 հազարը Բ. : Երկու ընկերներն իրենց գոյքը պիտի յանձնեն ընկերութեան, որ անոնց պարտքն ալ վրան պիտի առնէ : Մնացորդը դրամով պիտի ամբողջացնեն : Ա. ին կարասին պիտի հաշուուի 3000 զրշ. եւ Բ. ինը 3500 զրուշ : Նոյնպէս Բ. ին ապրանքները պիտի հաշուուին 21,000 զրուշ : Ասիկց զատ, երկուքին ալ պարտականներուն հաշիւներն 5 առ հարիւր պիտի զեղչուին ի նախատեսութիւն կասկածելի կամ անյոյս պահանջներու :

Ահա Ա. ի եւ Բ. ի հաշուեկշիւները :

Հ Ա Շ ՈՒ Ե Կ Շ Ի Ռ Ա . Ի

Պոյժ	Պարտք		
Կարասի	3,500	Դրամագլուխ	45,000
Ընդհանուր ապրանք	34,760	Վճարելի թուղթ	7,430
Մետուկ	3,940	Պահանջատէրք	5,250
Դանձելի թուղթ	7,145	Շահուղէն	8,865
Պարտականք	17,200		
	<u>66,545</u>		<u>66,545</u>

Հ Ա Շ ՈՒ Ե Կ Շ Ի Ռ Բ . Ի

Պոյժ	Պարտք		
Կարասի	4,000	Դրամագլուխ	30,000
Մետուկ	6,150	Վճարելի թուղթ	7,320
Ընդհ. Ապրանք	22,950	Պահանջատէրք	14,960
Վճարելի թուղթ	10,450	Շահուղէն	6,200
Արժէժուղթք	5,700		
Պարտականք	9,230		
	<u>58,480</u>		<u>58,480</u>

Կը խնդրուի հաշուակալներէ. —

1⁰ Ա. և Բ. ի օրհաշիւները փակել և

2⁰ Ա. և Բ. ընկերութեան օրհաշիւը բանալ :

Լաւագոյն լուծումը, եթէ զրկուի մեզ, կը հրատարակուի յաջորդ ատարի մը մէջ :

Մ Ի Ջ Ի Ն Վ Ճ Ա Ր Օ Ր

Միեւնոյն անձին քանի մը վճարումներ ունինք տարբեր պայմանաժամերով, կ'ուզենք ամենքը մէկ օր վճարել, առանց կորուստ կամ շահ ունենալու :

Օրինակ. — 3,600	Փր.	Յնվ. 15ին	0	0
1,800	»	Փետ. 12ին	28	8,40
900	»	Ապրլ. 5ին	80	12
<u>6,300</u>	Փր.			<u>20,40</u>

Միջին վճարօր = $\frac{6000 \times 20.40}{6300} = 19$ օր :

Յունվար 15էն 19 օր ետք, այսինքն Փետր. 3.

Բացաւր. — Եթէ առաջին գումարն Յնվր. 15ին վճարուի, պարտականը ո՛չ կորուստ պիտի ունենայ ո՛չ շահ : Երբ երկրորդ գումարն ալ Յնվր. 15ին վճարէ, 28 օր առաջ տուած պիտի ըլլայ, այսինքն 28 օրուան տոկոսը, 8,40 կորսնցուցած պիտի ըլլայ : Նոյնպէս եթէ երրորդ գումարը Յնվր. 15ին վճարէ, 80 օր առաջ վճարած պիտի ըլլայ և հետեւապէս 900 Փր. ին 80 օրուան տոկոսը, 12 Փր., կորսնցուցած պիտի ըլլայ : Ըստ այսմ, եթէ համագումար 6,300 Փրանքը Յնվր. 15ին վճարէ, 20,40 Փր. տոկոս կը կորսնցնէ : Ուրեմն այդ գումարն իր քով պահելու է որչափ ատեն որ 20,40 Փր. ի հաւասար տոկոս մը բերէ :

Կանոն. — Միջին վճարօրը գտնելու համար առաջին

պայմանօրն առնել իբր մեկնակէտ, տոկոսն հաշուել, 6000ով (6 0/0 էն) բազմապատկել և արտագրեալը բաժնել դրամագլխներու համագումարով:

Միջին վնարօրը գտնել քիւերով: — Օրինակ .

3,800	15 Յնվր.	0	0
1,800	12 Փետր.	28	50,400
900	5 Ապրիլ.	80	72,000
6,300			122,400

Միջին վնարօրը = $\frac{122400}{6300} = 19$ օր = 3 Փետր:

Կիրառութիւն . — Պարտական մը, որ միեւնոյն անձին քանի մը վճարումներ ունի զանազան պայմանաժամերով, կրնայ մէկ անգամէն վճարել միջին վնարօրը գտնելով: Պանքէտները, իրենց զեղչի պօսքութեան մէջ, յաճախ միջին վնարօրը կը գործածեն: Յանձնակատարներու կողմէ՝ ծախուելու համար ուրիշի զրկուած ապրանքներու վաճառման հաշիւները շատ անգամ այս մէթոտով կ'ըլլան, երբ քանի մը վաճառումներ կատարուած են տարբեր պայմանաժամերով:

Միջին վնարօրին հակառակը . — Երբեմն կը պատահի որ գնող մը կը խնդրէ վաճառականէն քանի մը վճարումներու բաժնել զնուած ապրանքին գումարը, առանց շահու կամ կորուստի: Օրինակ . — Ա. Գալփաքճեան Պուղոն և Ընկերութենէ գնեց 24,218 ֆր. ի ապրանք, 60 օրէն վճարելի: Գնողը կ'ուզէ, երեք անգամէն վճարել և կը հաշուէ, առաջին և երկրորդ գումարներն հաւասար բաժնելով:

8000 — 30 օր		6000 — 30 օր
8218 — 60 »	կամ	12218 — 60 »
8000 — 90 »		6000 — 90 »

$\frac{3}{4}$ միլիէմ: Արծաթ դրամները մինչեւ 200 զրշ. ի վճարումներու համար միայն պարտաւորիչ են, անկէ վերո՛չ. իսկ նիքէլէ դրամները՝ մինչեւ 10 զրշ: Եգիպտական ոսկին կը կշռէ 8 կրամ 500, արծաթ դալարին՝ 28 կրամ եւ արծաթ 1 զրուշնոցը 1 կրամ 400:

Չափ . — Մէդրական դրութեան հիմը սիրանն է: Արտէպը, որ տարողութեան միութիւնն է, այս չափին խորանարդն է:

Երկայնութեան չափեր . — Տիրան = 0,54 մէդր: Պէլէսի = 0,58 մ. Հեցապա = 0,65 մ.: Միմարի = 0,75 մ.: Բասապա կամ ձողաչափ = 3,55 մէդր:

Մակերեսոյթի չափեր . — Ֆեսսա6 = $333\frac{1}{3}$ քառակուսի քասապա = 4,200 մեդրական կենդինար 8336: Բիրաք = $\frac{1}{21}$ ֆէտտան = 175 մ. կենդ. 0,347: Սանմ = $\frac{1}{21}$ քիրադ = 7 մ. կենդ. 2931: Բառակուսի քասապա = 12 մ. կենդ. 60:

Տարողութեան չափեր . — Արեկայ = 198 լիդր: Վեպէ = $\frac{1}{6}$ արտէպ = 30 լիդր. Ռուպէն = $\frac{1}{4}$ վէպէ = 7 $\frac{1}{2}$ լ:

Կօրն . — Քօնօ = 800 օխա = 988 քիլօ 936: Խանքար = 36 օխա = 44 քիլօ 928: Օխա = 400 տրամ = 1 քիլօ 248: Ռօղօլի = 144 տրամ = 0,445 քիլօ: Էմիկն կամ ուղտի բեռ = 217 քիլօ: Տերիպա կամ բրինձի չափ = 2 արտէպ կամ 395 լիդր 5 եւ կամ 560 քիլօ:

ԱՂԻՍ . — Աղիւսը արհեստական շինուած անիւթ մ'է որ կաւային հողէ կը պատրաստուի: Կաւն յատկութիւն մը ունի, որով ջուրին հետ խառնուելուն պէս զանգուած մը կը կազմէ, ամէն ձև կ'առնէ, տաքութեան տակ կը կարծրանայ, և եփելէն ետք տոկունութիւն մը կը ներկայացնէ: Աղիւսը գործածուած է շատ հին ատեններ: Ամբողջ Ասիոյ մէջ, աղիւսէ պատերու հետքեր կան: Եգիպտոսի մէջ Հրեաները կը շինէին աղիւսը: Յոյներն ու Հռոմայեցիներն ալ շատ գործածած են: Աւելի յետոյ, աղիւսներն երեսի վրայ թողուեցան, Թ. դարուն մէջ էր որ աղիւս շինելու արհեստը մտաւ Անգլիա և ԺԴ. դարուն ընդհանրացաւ Եւրոպայի մէջ: Աղիւս շինելու համար գործածուած նախնական նիւթն է կա-

ւը կամ ալիւմինի կայծքարատը (silicate d'alumine) : Ամէնէն յարմար կամ պէտք է բաղկանայ 45-80 մաս բնակայծքարէ (silice), 15-40 ալիւմինէ և 18 ջուրէ : Ամէնէն լաւագոյն աղիւնները շէկ կամ աւազախառն ճերմակ կաւէ շինուածներն են : Ծինութեան նպատաւոր ժամանակներն են գարուն և աշուն : Աղիւն հետեւեալ կերպով կը շինեն . — Նախ կաւային հողը կը հաւաքեն և բաց օդին կը դնեն աշունէն մինչև գարուն : Այս կերպով, կաւին մէջ գտնուած օտար նիւթերուն մէկ մասը դուրս կ'ելնէ : Յետոյ կը դնեն փոսի մը մէջ ու կը թրջեն, մինչև որ ջուրն աղէկ մը ծծէ : 3-4 օրէն, այս թաց կաւահողը կը դնեն աւելի պղտիկ փոսի մը մէջ և գործաւոր մը կ'սկսի կոխկրտելով շաղվել : Երբ այս գործողութիւնն աւարտի, գործաւորը գետնին վրայ կը տարածէ կաւահողը, և նորէն կը շաղվէ ոտքով կամ տոփանի (թօզմազ) միջոցաւ, ամէն անգամուն աւազցանելով վրան : Երկրորդ գործաւոր մը ձեռքով կը շաղվէ և ուզուած մեծութեամբ կտորներու կը բաժնէ : Այն ատեն, կաղապարող գործաւորն այս կտորները կը դնէ փայտէ կամ երկաթէ կաղապարներու մէջ, աւելորդ մասը մէկդի կ'ընէ և աղիւսը դուրս հանելով կը զետեղէ յատուկ տախտակի մը վրայ զոր ուրիշ գործաւոր մը կ'առնէ կը տանի կալատեղը (հարման) և հոն արևին տակ կը դնէ աղիւսը, զոր ա՛յն ատեն միայն փուռը կը նետեն երբ աղէկ մը չորնայ : Կաղապարող վարպետ գործաւոր մը և օգնականը օրական մինչև 3000 աղիւս կրնան պատրաստել այսպէս : Մեքենաներով շաղվելու և կաղապարելու գործը աւելի կատարեալ և աւելի արագ կ'ըլլայ, բայց մեծ ծախքի կը կարօտի : Ահագին սպառում ունեցող գործարաններու միայն կը յարմարի : Տեղական աղիւսները գրէթէ միօրինակ են, բայց Եւրոպայէ եկած աղիւսի տեսակները խիստ շատ են : Սովորական աղիւսները 22-27 սնդմ. երկայնութիւն, 10-17¹/₂ լայնութիւն և 4-7 թանձրութիւն ունին : Անգլիական ըսուած աղիւսները խոշոր և թեթեւ են : Սալայատակի համար գործածուած աղիւսները, որք ամէն բախումի դիմանալու են, միւսներէն շատ աւելի խնամքով կը պատրաստուին : Լաւագոյնները կուգան Պուր-

կօներէ : Այս աղիւսներուն լաւ տեսակէ ըլլալն հասկնալու համար ժամու մը չափ կը դնէք տաք ջուրով ամանի մը մէջ : Եթէ անոնց ինչ ինչ մասերն անջատուին, վարնոց տեսակէ են : Ընդունարաններու և ջրմուղներու յատուկ աղիւսներն ամէնէն կարծր և ամէնէն ծանր աղիւսներն են : Անկէջ աղիւսները, որք փուռերու և հնոցներու շինութեան համար կը գործածուին, պէտք է դիմանան խիստ տաքութեան : Կը շինուին կարելի եղածին չափ դուռ կաւահողէ : Լաւագոյն տեսակները կուգան Մօնդէլէ, Մէյլօնայէ (Մէճի մօտ) և Պուրկօներէ : Անկէջ աղիւսները սովորաբար միւսներէն 25%₀ աւելի կ'արժեն : Գոգաւոր աղիւսները, զոր 1849ին հնարեց Պօռի անուն մէկը, թեթեւ, խնայողական ու դիմացկուն են և տաքութիւն կամ խոնաւութիւն չեն հաղորդեր : Կը գործածուին թեթեւ շէնքերու համար, ինչպէս առաստաղ, կամար, միջնորմ եւլն : Գոգաւոր աղիւսները կարելի եղածին չափ քիչ ծեփով կամ շաղախով կը միանան իրարու : Լաւագոյն տեսակները կը շինուին Վօժիուարի, Մօնչանէնի մէջ եւլն : Կուրլիէյի բոլորակ աղիւսները կը գործածուին պատերու մէջ վառարանի խողովակներ շինելու : Յիշենք նաեւ ապիկուած (սրբլը) աղիւսները, որք ջրամբարներու եւ ջրմուղներու համար կը գործածուին : Կան ուրիշ կարգ մը աղիւսներ ալ, որոց շինութեան մէջ կաւէն զատ ուրիշ մարմիններ ալ կը մտնեն : Հոլանդական ըսուած աղիւսները կը շինուին այնպիսի կաւով, որուն մէջ քուարցային (կարծր քար մը) աւազ խոնուած է : Ծակոսկիկ ըսուած աղիւսները փայտաքար եւ փայտի փոշի կը պարունակեն, Փորձուցաւ նաեւ աւազաքարէ և ճենապակիէ գոգաւոր աղիւսներ շինել, որք իրաւ է թէ շատ կը դիմանան, բայց սուղի կը նստին : Սուկիէ (մանթար) աղիւսները կը շինուին փոշիացած սոււնկով կամ հին խցաններու կտորուանքով եւ կիրով : Այս աղիւսներ շատ կը դիմանան, խոնաւութիւնը կը վանեն եւ իրենց թեթեւութեան համար շատ բաներու կը գործածուին : Մէկ խորանարդ մէկը պատի համար 400 գերմանական, 300 աւստրիական, 495 հոլանտական, 630 ֆրանսական, 600 տեղական աղիւս կ'երթայ : — Առաջ Պուլտոյ մէջ գործածուած տե-

ղական աղիւսը մեծ մասամբ Մարսիլիայէ կուգար, բայց շատ տարիներէ ի վեր Սասգիւղի և Քեաղըտհանէի միջեւ հաստատուած աղիւսարաններն իրենք կը հայթայթեն այս պէտքը: Իրաւ է թէ այս աղիւսներ ամենեւին չեն հաւասարիր Մարսիլիայ աղիւսներուն, բայց զնոյ տարբերութիւնն այնքան մեծ է որ Պոլսոյ մէջ չէնք շինողը կ'ստիպուի տեղականն ընտրել:

ԱՂԱՍԻ. — (Uarskja պալլը).—Ֆրանսերէն sardine, անգլիերէն pilchard, գերմաներէն sardelle, իտալերէն sardine: — Ովկիանոսի աղկերները մինչեւ 26 սնդմ. երկայնութիւն ունին, իսկ Միջերկրականի մէջ գտնուածները 18 սնդմ.ը չեն անցնիր: Ամէնէն մեծ աղկերը ձմեռն երեւան կ'երևէ: Ովկէանոսի մէջ ո՛չ, բայց Միջերկրականի մէջ կան տեսակներ որք միայն 25 հազարորդամէգր երկայնութիւն ունին: Աղկերը գլխաւորապէս և առատօրէն կ'որսացուի Անգլիոյ, Սպանիոյ, Բորդուկալի եզերաց վրայ և Միջերկրականի մէջ: Թարմ կը ծախուի անմիջական սպառման համար կամ մեծ մասամբ կը յանձնուի պահածոյ ուտելիք պատրաստող գործարաններու, որք կ'աղեն ու տակառներու մէջ դրնելով կը ծախեն: Փոքր մաս մ'ալ յատուկ գործիքներու մէջ կը ձնչուի, լուսաւորութեան յատուկ իւղ մը հանելու համար: Այս ճարտարարուեստը բախտի կապուած բան մ'է, վասն զի աղկերը մերթ հազուագիւտ կը դառնայ ու մերթ յանկարծ ահագին քանակութեամբ կը խուժէ: Գինն ալ շատ փոփոխական է: Երբեմն 1,000 հատն 150 դրչ. կ'արժէ ու երբեմն 15 դրչ.: Աղկերը վաչկատուն ձուկ մ'է: Անգլիա 1900ին ներածած է 660,000 սթերլինի աղկեր և արտածած է 19 միլիոնի: Իտալիա գլխաւորապէս Թունուզէն ու Ալժեւրիայէն ներածած է 850,000 քիւ աղկեր: Ֆրանսա, նոյն տարւոյ մէջ, ներածած է մէկ միլիոն ֆրանքի եւ արտածած է 19 միլիոնի:

ԱՂՈՒՏԻ ՄՈՐԹ. — Տե՛ս Մուշակ:

ԱՃԷՆՏԱ. — Գրպանի յատուկ պղտիկ տետրակ մ'է, ուր ծանօթագրութիւններ կը գրուին օրն օրին: Բարիզի մէջ 6 գործարաններ կան որք միմիայն այս տետրակին շինութեամբ կ'ըզաղին: Աճէնտան, որուն գործածութիւնը շատ հին է, այսօր գեղարուեստական ապրանք մը դարձած է իր նուրբ ու ճաշակաւոր շինութեամբ: Ճարտարարուեստն ու վաճառականութիւնն 1820էն ի վեր մեծ զարգացում ստացան: Գծախտաբար կարելի չէ որոշել թէ այս տետրակներուն համագումար սպառումն ի՞նչ քանակութեան կը հասնի:

ԱՃԻՕ. — Դրամներու անուանական և իրական արժէքին տարբերութիւնը: 1,000 ֆր.ի ոսկին, օր. համար, կ'արժէ 1,004 ֆր. արծաթ դրամ, կամ թէ քիչ մը աւելի կամ պակաս: Ահա այս 4 ֆր.ը ոսկիին անիօն է: Երբ խնդիրը երկրի մը դրամին ընթացիկ գինը բաղդատելու վրայ է ուրիշ երկրի մը դրամին ընթացիկ գինին հետ, այն ատեն անիօն փոխանակագին անունը կ'առնէ: Անիօ կ'ըսուի նաև առեւտրական թուղթի մը համար վճարուած գեղջը, ինչպէս նաև այն տոկոսի յաւելուածը որ կը տրուի դեղջուած թուղթ մը նորոգելու համար: Շատ պանքաներու հաշուակալներ անիօ անունով հաշիւ մը կը բանան և հոն կ'անցընեն տոկոս, յանձնարարողչէք ևն:

ԱՄԱՋՈՆ. — Թեթեւ ու ողորկ կերպաս մը, որով կիներու շրջագգեստ ևն. կը շինուի: Հիւսուածոյ մ'է, որուն թեգանն ու առէջը սովորաբար գզուած անլուայ բուրդի թելերէ կը պատրաստուին: Այսու հանդերձ, միջին և ստորին տեսակ ամազոններ ալ կը շինուին սանտրուած բուրդէ առէջով: Ամազոն կերպասը, որ ամէնէն առաջ ձիւաւոր կիներու զգեստի համար գործածուած է — և ասկէ առած է ամազոն անունը —, ընթացիկ գործածութեան մէջ մտաւ: Այսօր ամէն տեսակ շրջագգեստներ ու մանրօններ կը շինուին անով: Ֆրանսայի մէջ, այս կերպասին արտադրութեան գլխաւոր կեդրոններն են Սըտան, Էլպէօֆ, Լուվիէ, Վիւ ևն.: Կարեւոր գործարաններ կան նաև Ռէնի, Սաքսի, Պոհեմիոյ

և Պելժիոյ մէջ: Ամազոնի սովորական լայնութիւնն է 130 սնդմ. և մէգրոն, տեսակին համեմատ, կ'արժէ 3 1/2-8 ֆրանք:

ԱՄՍՍՈՒԱ. — Գաւառ Սըլազի վիլայէթին մէջ: Մահերեոյթ 20,450 քառակուսի քիլոմէթր: Բնակիչ 259,600: Կլիմայ 38⁰էն-10⁰: Միջին գումար տարեկան արտածութեան 264,000 օսմ. ոսկի (գլխաւորապէս ալիւր և պտուղ) և ներածման՝ 45,000 ոսկի (գլխաւորապէս Շուէտական և Ռուսական երկաթ, Ատանայի բամբակ, Մանչէսթըրի կերպաս, Մարսիլիայի խահուէ ևն.): Ամասիա գաւառակը Սամսոն-Սվազ ճամբուն վրայ (286 քիլմ.) կը գտնուի: Բնակիչ 30 հազար: Գլխաւոր ճարտարարուեստ ուստայնանկութիւնն 2500 գործասեղան: Պատրաստութիւն մետաքսեղէն ընտիր հիւսուածոներու: Կարեւոր ջաղացքներ, որք տարին աւելի քան 150,000 պարկ ալիւր կ'արտադրեն և 2/3ը կ'արտածեն: Երկու դտարան: Ներածում. — Պահուէ, շաքար, երկաթ, մոմ, ևն. Արսածում. — Մետաքսեղէն, աղ, ցորեն, գինի, բամբակ, պտուղ: Պտուղներուն մէջ անուանի են խնձորն ու սաւորը:

ԱՄԷՌ. — Գառնողի Ախորժակ բացող ըմպելի մը նըկատուած: Կը պատրաստուի ալքոլի մէջ թրջուած նարնջի և մանցարիճի կեղեւներով: Առողջաբանք կը հակառակին այս ոգելից ըմպելիին գործածութեան, որովհետեւ ամէն շինողները շատ անգամ ամենագէշ տեսակէն ալքոլ կը գործածեն, վստահ ըլլալով թէ հեղուկին դառն համէն յայտնի չըլլար ալքոլին վարնոց տեսակը: Միայն Փրանսայի և Հոլանտայի մէջ տարեկան 100,000 հարիւրալիդը ամէն կ'սպառի:

ԱՄՈՒՆ. — Գլխաւոր քաղաք Սօմի նահանգին: Բարիզէ 132 քիլոմէթր հեռի: Բնակիչ 90,000, Էպպէս ճարտարագործ քաղաք, Բամբակի հինգ մանարաններուն մէջ 90 հազար շամիրակ (իլ) եւ 4,000 գործասեղան՝ բամբակէ թաւիչներու շինութեան համար: Պատրաստ զգեստներու ճարտարարուեստը շատ զարգացած: Բուրդէ ու բամբակէ

գուլպաներու շինութեան համար կ'աշխատին 23,000 գործաւոր: Տարին 3 միլիոն քիլօ բուրդ և 800,000 քիլօ բամբակ կ'սպառի գուլպայի համար: Ամիէն Փրանսայի այն միակ կեղրոնն է ուր կը շինուի «Բուրքիսը» ըսուած թաւիչը: Կարեւոր ձուլարաններ, խաղախորդարաններ, պարկ շինելու յատուկ գործարաններ, սղոցարաններ, աղիւսարաններ, շոգեշարժ մեքենաներու, կոշիկի, օճառի, շօքօլայի, թուղթի և քիմիական արտադրութեանց գործարաններ: Տարեկան տոնավաճառը, որ Յունիս 24ին կ'սկսի և ամիս մը կը տեւէ, շատ կարեւոր է: Առեւտրական Սենեակ, Դատարան և Թանգարան: Մասնաճիւղք Պանք տը Փրանսի, Քրէտի Լիօնէի, Գօնթուա ա'Էսքօնդի ևն: Հաղորդակցութիւն երկաթուղիով, հեռագրով, հեռաձայնով:

ԱՄՈՒՍ. — Չինաստանի այն հինգ նաւահանգիստներէն մին, որք արտաքին վաճառականութեան առջեւ բացուեցան Նանքինի դաշնագրով: Բորդուկէդք 1544էն ի վեր առեւտրական յարաբերութիւններ ունէին Ամուլայի հետ: Անգլիացիք ալ վաճառականութեան սկսան ժ-Ը դարուն սկիզբը: Գլխաւոր արտադրութիւններն են շաքար, թէյ, թուղթ, ծխախոտ, խրուկ (գեներօ), կանեփ, բրինձ, պտուղ: Ներածուիրևն. — Աֆիոն, քարիւղ, ամերիկեան ալիւր, ճարտական ցորեն, բամբակեղէն ապրանքներ ևն:

ԱՄՍՂԵՐՏԱՄ. — Հոլանտայի ամէնէն բազմամարդ քաղաքը: Ապահով նաւահանգիստ: 500,000 բնակիչ: Աղամանդի վրայ կը բանին 10,000ի մօտ գործաւոր: Շաքարի դտարաններ և շոգեշարժ մեքենաներու գործարաններ: Ամադերտամ դրանգիդի կեղրոն մը չէ Ռօդէրտամի պէս, այլ առեւտրական մեծ ու կարեւոր հրապարակ մը: Գլխաւոր ներածումներն են խամ շաքար, ձավայի թէյ, Պրագիլիայի խահուէ, Սումադրայի ծխախոտ, ձաբոնի բրինձ ևն.: Արտածումներն են բանուած աղամանդ, զտուած շաքար, պանիր, կարագ, ևն.: Ելմտական հաստատութեանց գլխաւորներն են Հոլանտական Պանքան (Nederlandsche Bank), որ 18 մասնաճիւղ ունի, Պանք տը Բարի է Տէ Բէյ-Պա, որուն

կեղրոնը Բարիզ է, ևն. : Երկու առեւտրական սենեակ, մին Հորանտական, միւրը Ֆրանսական : Առեւտրական սովորութիւնք Եւրոպայի գլխաւոր նաւահանգիստներուն սովորութիւններէն շատ չեն տարբերիր. Գնումները կ'ըլլան 30, 60, 90 օրուան պայմանաժամերով : Բրոսսայի համար սովորաբար 6 ֆիօրին ծախք կ'ըլլայ :

ԱՄՈՒԷ. — Տեսակ մը աղէ դրամ որ կը գործածուէր Ափրիկէի և մասնաւորապէս Եթովպիոյ մէջ եւ 100 փարայի մօտ արժէք ունէր : Ամօլէն 23 սնդմ. երկայնութիւն ունի և կը կշռէ 684 կրամ : Բնիկը, որ շուկայ կ'երթար ո՛ր և է վաճառք զնելու, ստիպուած էր, իբր դրամապանակ, գործածել ջորի մը կամ էջ մը : 1894էն ի վեր այս դրամին տեղ անցած են արծաթ և պղինձ դրամներ : Բարիզի Դրամներու Թանգարանին մէջ Ամօլէն նմոյշ մը կայ պահուած :

ԱՅՄ. — (Ֆրանսերէն chèvre, անգլիերէն goat, գերմաներէն geisz, սպաներէն cabra, իտալերէն capra) : — Կաթը, պանիրին հետ, միակ արտադրութիւնը չէ զոր այժը կուտայ մեզ : Անոր մորթն ու մազը (քիֆֆի) շատ աւելի կարեւոր նիւթեր են զորս ճարտարարուեստը կը գործածէ : Ընտանի այծերն երեք տեսակի կը բաժնուին. — Եւրոպական, Ասիական և Ափրիկեան : Եւրոպական ու Ափրիկեան այծերու մորթերը մուշտակի համար չեն գործածուիր, այլ կը ծառայեն ֆէյի սերիսի և սախիսիյան շինուելու : Քէյի սերիսի կը կոչուին այն մորթերն որք կեղեւով դանուած են (tanné), իսկ սոււամով դանուածները մարոկենի կամ սախիսիյան կը կոչուին : Հնդկաստանի և Չինու այծերը մասամբ դանումի և մասամբ մուշտակներու շինութեան կը գործածուին : Նշաւաւոր են Էնկիւրիի, Քաշմիրի և Թիպէրի այծերը, որք կը գտնուին ի Թուրքիա, Հիմալայայի վրայ : Հնդկաստանի հիւսիսային կողմը, Թիպէրի հարաւային կողմն և Ի Բէնճապ : Էնկիւրիի այծերուն տուած քիֆֆիք երկար, մետաքսանման, բարակ և ճերմակ կ'ըլլայ : Անով կը շինուին ընտիր դիմացկուն գորգեր և հաստատուն կերպաներ : Մէն մի այժ մինչև 2 քիւօ քիֆֆի կուտայ : Էնկիւրիի այժը տարին 2 ձագ կը բերէ :

Brousse, 9 Mai 1901

Messieurs,

A l'approche de la nouvelle campagne, nous nous permettons de vous renseigner sur la marche des éducations.

La quantité de graine mise à l'éclosion est la même que l'année passée. Dans la plaine, les vers vont atteindre la première mue. La feuille est abondante. Le temps, un peu incertain, s'est maintenant rétabli.

Nous vous faisons nos offres de service, pour le cas où vous voudriez faire vos achats dans nos localités, disposant de tout ce qui est nécessaire pour faire un amas de cocons.

Agrez, Messieurs, nos salutations distinguées.

C. D.

Broussa, 9 Maggio 1901

Signori,

Prossimi alla nuova campagna serica, ci permettiamo ragguagliarvi sull'allevamento dei bachi.

Il seme incubato è del medesimo quantitativo dello scorso anno. Gli allevamenti alla pianura sono già prossimi alla prima muta. La foglia è abbondante. Il tempo alquanto inconstante, ora si è ristabilito.

Qualora voi, Signori, voleste rivolgere i vostri acquisti anche in queste località, vi offriamo i nostri serviggi, disponendo di tutto quanto occorre per fare un ammasso di bozzoli.

Gradite, Signori, i nostri distinti saluti.

C. D.

Բարիզ, 25 Յուլիս 1901

Տէր

Վաճառատունը, որուն անունը գրուած է ներքակ թուղթի կտորի մը վրայ, ապրանք ուզած է ինձմէ: Գործին բերմամբ, պիտի ստիպուիմ 20,000 Ֆրանքի չափ վարկ մը բանալ անոնց: Նոյն իսկ կընայ ըլլալ որ աւելի մեծ գումարներ պահանջող ըլլամ:

Պոլսոյ մէջ բազմաթիւ և ընդարձակ յարաբերութիւններ ունենալնիդ գիտնալով, խորհեցայ թէ ամէնէն աւելի դուք կընաք ստոյգ տեղեկութիւն տալ ինձ թէ՛ որքան վստահութեան ու վարկի արժանի է այդ վաճառատունը:

Անշուշտ աւելորդ է ըսել որ այս մասին Ձեր տուած տեղեկութիւնները մեր միջեւ պիտի մնան բոլորովին:

Ընդունեցէք սիրալիբ ողջոյններս:

Paris, le 10 Aout 1901

Monsieur,

La maison, dont je place le nom sur un morceau de papier joint à la présente, m'a adressé des propositions d'affaires. La nature de nos opérations me forcerait d'ouvrir à ces Messieurs un crédit d'une vingtaine de mille francs, et il pourrait même arriver qu'à l'occasion je me trouvasse à découvert avec eux pour des sommes plus importantes.

Sachant combien nombreuses et étendues sont vos relations avec la ville de Cons/ple, j'ai pensé que personne n'était mieux placé que vous pour me renseigner au juste sur le degré de confiance et de crédit que mérite cette maison. Il est sans doute superflu d'ajouter que ce que vous me manderez à ce sujet restera tout à fait confidentiel entre nous.

Recevez mes salutations bien cordiales.

...

افندی

ملفوف و ورقپاره ده اسمی محرر تجارتخانه بزمه معامله تجاریه ده بولمقی آرزوسنده در. حسب الايجاب من کور تجارتخانه یه بکرمی بیک فرانقلق بر اعتبار کشاد ایتک مجبوریتنده بولنه جغم. مع مافیه دها مهم بر مبلغ اعتبار ایده جکم ده ممکن در. ذات عالیترینک در سعادت پیاسه سیله معاملات کثیره ده بولند یغکزی بیلدیکم جهته بوتجارتخانه نک نه درجه اعتبارلی اولدینی و آکا نه مقدار قره دی ایدیه بیله جکی حقنده معلومات موثوقه اعطاسنه مقتدر اوله جغکز قویاً مجزومدر. اعطاسنه همت بیوره جغکز معلوماتک بینمزرده خفی قاله جغه امین اولمکزی بیانه سلام مخلصینک قبوانی نیاز ایلم. فی ۳۰ تموز سنه ۳۱۷

Paris, Aug. 10th 1901

Sir,

The house whose name is placed on the annexed slip of paper, has made me a business offer. The nature of our transactions would require that I should open to the managers of this firm a credit of some twenty thousand francs, and it [might even happen that I should have on their account to give credit for much larger sums.

Knowing how numerous and extensive your connections are with the town of Cons/ple, I am persuaded that no one can be in a better position to inform me of how much confidence and credit may be accorded to this firm. It is unnecessary to add that anything on this subject forwarded me will be given most confidentially.

Believe me to remain,

Yours truly

...

Cons/ple, le 10 Août 901

Monsieur le Directeur
de la Deutsche Bank
Berlin

Nous avons l'honneur de vous informer qu'en date du 31 Juillet dernier nous avons délivré à M. Charles Egg une lettre de crédit simple (No. 1576) de la somme de trois mille marks, valable pour trois mois, sur laquelle a été inscrite l'adresse de votre honorable établissement.

Nous recommandons à votre meilleur accueil le porteur de cette lettre de crédit et vous prions de lui payer l'équivalent, au cours, des sommes qu'il vous demandera jusqu'à concurrence du disponible du crédit qui lui est ouvert, sous déduction de vos frais et contre reçu double, dont un exemplaire à nous remettre.

Vous voudrez bien inscrire vos paiements au dos de la lettre de crédit et vous en rembourser à vue sur notre caisse.

Nous vous remettons, inclus, un spécimen de la signature de M. Charles Egg, et vous remerciant par avance des égards que vous voudrez bien avoir pour lui, nous vous prions d'agréer, Monsieur, l'expression de nos sentiments distingués.

Muller Frères

Cons/ple, 10 August 1901

An die Deutsche Bank,
Berlin

Hiermit beehren wir uns, Ihnen mitzutheilen, das wir unterm 31 Juli, Herrn Charles Egg einen einfachen Kreditbrief (N. 1576) für die Summe von drei tausend Marken übergeben haben. Letzterer drei Monate gültig, und wir haben den Namen Ihrer schätzbaren Anstalt darauf gesetzt.

Ueberreicher dieses Kreditbriefs empfehlen wir Ihrer besten Aufnahme und bitten Sie, demselben, in Rücksicht auf den Kurs, die verlangten Summen bis zum Betrag des verfügbaren, ihm eröffneten Kredits, unter Abzug Ihrer Kosten und gegen seine doppelte Quittung auszuzahlen. Von letzterer wollen Sie gefälligst ein Exemplar an uns einsenden.

Wir ersuchen Sie, die an Herrn Egg geleisteten Zahlungen auf der Rückseite des Kreditbriefs vermerken zu wollen und sich dafür auf uns Beisicht zu erholen.

Einliegend finden Sie die Unterschrift des Herrn Charles Egg.

Ihnen zum Voraus für alles, was Sie die Güte haben ihm zu erweisen, bestens dankend, zeichnen wir

Hochachtend,
Muller Frères

Հ Ի Ի Ս Կ Է Ն Կ Ե Ր Պ Ա Ս Ն Ե Ր Ը

Ե Ի

ՋԱՆՈՆԻ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՂԵՐԸ (Métier)

Բ.

Ասեղին ծայրը, ինչպէս կը տեսնուի Ա. ձեւին մէջ, կեռ է ու բադի կտուցի ձև շարժուն կափարիչ մ'ունի որ ճշտի կ'փակուի կեռին վրայ, այնպէս որ՝ ասեղն ահոսէն դուրս ելած ատեն կտուցը կ'բացուի և հիւսուելիք թելը



Ա. Չեւ


կ'անցնի կեռին մէջ: Այս գործողութիւն՝ արհեստական բառով՝ կ'կոչուի Cueillage = թելաքաղում: Յետոյ ասեղը վար քաշուելով կտուցը կ'փակուի, որով յատակը գտնուած նախորդ կտիմը կտուցին վրայէն սահելով կ'իյնայ կեռին կառչած օղակին վրայ: Ասիկա կ'անուանուի fromage = ձեւացում, այսինքն նոր կտիմը պատրաստուած է կեռին մէջ: Սոյն ասեղը հնարչին անունովը կոչուած է Սալֆեմֆրինկ կամ կրտուցաւոր ասեղ:

Ուղիղ գծի վրայ հիւսողներէն զատ հնարուած են նաև բոլորչի հիւսող մեքենաներ, փոքր տրամագիծով՝ այն է գուլպայի լայնութեամբ: Ասոնց ասեղներն ալ կ'շարժին ուղղահայեաց ելեւէջներով: Այս ձեւով շինուած մեքենաները կ'կոչուին քրիզօքօզ եփսոնիս քիւպիլիոն = Արագընթաց բոլորչի հիւսող:

Կտուցաւոր ասեղներու սոյն երկու դրութիւնն ալ այսօր հազարաւոր ձեւերու վերածուած և շատ մը մեքենական շարժումներով խճողուած են: Կ'գործածուին փոքր արտադրութեանց կամ առտնին աշխատութեան համար:

Սոյն հիւսող մեքենաները հնարուելէն ետք, գրէթէ

քառորդ դար մը վարպետ մեքենագէտներ ջանացին զայնս կատարելագործել, միշտ սկզբունքն անժխտելի կարծելով: Եւ ահա՛ 1720ին Ֆրանսայի Օպ գաւառագլխին Թոուա քաղաքին բնակիչներէն Ֆուգէ անուն մեքենագէտ-ճարտարագէտը՝ իր մէկ նոր դրութեամբ՝ հիմնովին կ'յեղաշրջէ նախորդները: Նախ և առաջ ասեղին ձեւը կ'փոխէ (Տե՛ս Բ. ձեւը), այն է, փոխանակ կտուցը շարժուն ըլլալու, կեռն ու կտուցը միակտուր կ'ձեւացնէ, և կտուցին ծայրը չափազանց բարակ ու հատու, ինչպէս նաև առածգական կ'ընէ ու կ'անուանէ պարզ ասեղ. նոյն հատու ծայրին ներքեւը փոքրիկ խոռոջ մ'ալ կ'ձեւացնէ,



Բ. Չեւ

— ինչպէս քիչ մը վարը պիտի բացատրենք: — Յետոյ ասեղները փոխանակ շեղ կամ ուղղահայեաց դիրքով ակոսներու մէջ շարժական յօրինելու, բոլորչի անիւի մը շուրջը կ'գետեղէ, բոլորովին հաստատուն և հորիզոնական դիրքով: Սոյն անիւն ուղղահայեաց ձողի մը վրայ անցուած ըլլալով՝ այս վերջինը գագաթէն կ'հաստատուի գետնի մակերեսէն գրէթէ 2 մէդր բարձրութեամբ գետեղուած սիւնի մը վրայ, այնպէս որ ասեղները կրող անիւը՝ բազմաստեղեան ջահի նման առկախ կ'մնայ, և ջրաղացքի քարի պէս հորիզոնաբար կ'դառնայ, ներքուստ հաստատուած խոտոր ատամնաւոր կրկին անուակներով մանիչ լծակի մը հաղորդակցութեամբ (ինչպէս կ'երեւայ Մեքենային ձախ կողմը), և կ'անուանուի Երջուն կամ = Métier circulaire: Չմոռնանք ըսել թէ այս ասեղնակիր շրջանակէն քիչ մը փոքր տրամագծով բոլորչի յենարան մ'ալ հաստատուած է կեդրոնական ձողին վրայ 8-12 հարիւրորդամէդր նախորդէն բարձր, որուն կ'կցուին մեքենային յարակից զանազան մասերն, և որ կ'կոչուի Իրուքեանց յեմարան = Porte systèmes:

Բայց Պ. Ֆուգէյի գիւտն ասով չի վերջանար, որովհետեւ խնդիր է թէ սոյն պարզ ասեղներով ի՞նչպէս պիտի յառաջ գան քելփաղում ու ձեւացում: Արդ, Պ. Ֆուգէ կ'յօրինէ կոն-բոլորչի տփածեւ գործիք մը, որ կ'կոչուի Mailleuse = կսմնող: Արդարեւ այս գործիքը մեքենագիտական

աշխարհիս հրաշալիքը կ'համարուի. գրէթէ անկարելի է զայն գրով բացատրել եւ ընթերցողին երեւակայութեան առջեւ պատկերացնել. սակայն ստիպուած ենք գէթ հարեւանցի տեղեկութիւն մը տալ թէ սոյն կտմնող գործիքին արմատն առանցք մը կայ, որուն մէջտեղը 3 հարիւրորդամէրը իրարմէ հեռաւորութեամբ երկու արոյրէ շրջանակներ հաստատուած են, գրէթէ տասնական հարիւրորդամէրը տրամագծով: Ասոնց շուրջը համաչափ բաժանումով և 100է աւելի ակոսներ բացուած են, որք կարծես հառաքայթներ կ'ձեւացնեն: Այս ակոսներուն մէջ դէմ առ դէմ շարուած են ընտիր պողպատէ պատրաստուած ժանիքներ (Տե՛ս Գ. ձեւը՝ բնական մեծութեամբ), որք արհեստական լեզուով կ'կոչուին



Գ. Ձեւ

Dent de mailleuse = կրսմնասալ: Ասոնք արտաքուստ շրջանակով մը սանձանափակուած են, և

ներքուստ մասնաւոր արտակեղրոնով մը կ'շարժին՝ ալեծածան հոսանք մը ձեւացնելով: Առանցքին յետսակողմն հաստատուած է նաեւ սոյն ատամներուն քանակութեամբ բաժնուած ատամնաւոր անուակ մը, և այս ամբողջութիւնը (կտմնողը) մասնաւոր նեցուկներով թեւակի մը վրայ կցուած է ու թեւակն ալ զետեղուած է դրութեանց յենարանին վըրայ: Երբ ասեղնակիր անիւն հորիզոնաբար թաւալի, կտմնող գործիքն ալ ուղղահայեացաբար ճախր կ'առնէ, ասեղներուն արմատը՝ յետսակողմի անուակին շնորհիւ՝ իրրեւ շարժիչ ատամն ծառայելով: Որով մէն մի կտմնատամ հաւասարապէս կ'իջնէ իւրաքանչիւր ասեղին պարապութեան միջոցին մէջ, հիւսուելիք թելը վար քաշելով և ասեղին կտուցին մէջ անցնելէ յետոյ՝ կ'բերէ մինչեւ արտաքին եզրը. ահա այսպէս կտմնատամները յաջորդաբար հոսանք մը կը կազմեն, ու թելն որոշ քանակութեամբ ասեղներուն ծայրերը կ'բերեն կը հաստատեն: Հոս կ'աւարտի թելքաղի գործողութիւնը:

(Շար.)

Մ. ԳԱԼԷՆՏԵՐ



Գ Ի Ն

12 Տետի' դրու 12 ԿԱՆՆԻԿ

Գաւառաց հարևար' իբր բոսի/ ծախս' 3 դրուշ աւելի

Հասցե

ՍԻՄՕՆ ԶԷՕՄԼԷԲԵԱՆ

Ի հմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերթի
Պապը Ալի ճասեքի թիւ 23—25 Կ. Պոլիս

ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամեն վանատականի, գրագրի, ուսանողի եւայլն.

.....
معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول
سنه ۳۱۶ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر

ՀՀ Ազգային գրադարան



NL0083828

